ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 նոյեմբերի 2021 թ. N 1229-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N1096-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 12-ի «Արցախի Հանրապետության տարածքում բնակչության բնակեցման և տնտեսական գործունեության վարման ապահովմանն ուղղված վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու և վերացնելու հատուկ պայմանները և ռեժիմը սահմանելու մասին» N 1096-Ն որոշման 1-ին կետի՝

1) 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«ա. 2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև նոյեմբերի 22-ը՝ կասեցնելով Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեությունը,».

2) 2-րդ ենթակետի «ա» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «ա1» պարբերություն.

«ա1. 2021 թվականի նոյեմբերի 16-ից Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում գործող ուսումնական հաստատությունների միջնակարգ կրթության 1-ին աստիճանի ուսուցումն անցկացնել առկա ուսուցմամբ և հերթափոխով՝ յուրաքանչյուր հերթափոխում առավելագույնը 15 աշակերտ, իսկ 2-րդ և 3-րդ աստիճանների ուսուցումն անցկացնել հեռավար,»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատվածն է»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՌԻՑԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք № 01-266
18 նոյեմբերի 2021 թ.